ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՏԿԵՆ-ՀՄԱ-ԾՁԲ- 2019/2ՏՀ

ք. Երևան «03» սեպտեմբեր 2019թ.

«ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը», ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարին փոխարինող Հ. Բատիկյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Գ. Արշակյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Մոտեցում Մեծամորի թանգարան 4.1կմ (3.6+0.5) ավտոճանապարհի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Կապալի օբյեկտի և դրա առանձին մասերի երաշխիքային ժամկետները ներկայացված են պայմանագրի N – Հավելվածում:[18]

---

[18] *Կիրառվում է, եթե կնքվում է շինարարական ծրագրի կատարման որակի նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագիր:*

2.4.5 Եթե պայմանագրի 2.4.4 կետով սահմանված ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Կատարողը պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Պատվիրատուին վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար կապալառուի կամ Պատվիրատուի կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով[19]

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 2496000 (երկու միլիոն չարս հարյուր իննսունվեց հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն[20]: Վճարումը կիրականացվի ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում Կողմերի միջև համաձայնագիր կնքելու միջոցով:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[23] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

---

[19] *Կիրառվում է, եթե կնքվում է շինարարական ծրագրի կատարման որակի նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագիր:*

[20] *Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Պատվիրատուն պայմանագրով ֆինանսական պարտավորություններ ստանձնում է այդ գնումն իրականացնելու համար պահանջվող ֆինանսական հատկացումներ նախատեսված լինելու դեպքում և այդ հատկացումների շրջանակներում:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[24]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ

---

[24] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **4** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ՀՀ ք. Երևան Կառավարական տուն 3 ՀՀ կենտրոնական գանձապետարան ՀՎՀՀ 02578338 Հ/Հ 900011002632 ---------- (ստորագրություն) Կ.Տ.	«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ ք. Երևան, Կոմիտաս 54բ «Արդշինբանկ» ՓԲԸ «Նաիրի» մ/ճ Հ/Հ 2473700277210010 ՀՎՀՀ 01508665 ---------- (ստորագրություն) Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված թիվ 1
« 03 » սեպտեմբերի 2019թ. կնքված
ՏԿԵՆ-ՀՄԱ-ԾՁԲ- 2019/2ՏՀ ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Մոտեցում Մեծամորի թանգարան 4.1կմ (3.6+0.5) ավտոճանապարհի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություններ

Ծրագրի անվանումը	ՀՀ 2019թ. պետական բյուջեի պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում
Ֆինանսավորման աղբյուր	2019թ. ՀՀ պետական բյուջե
Պատվիրատու	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
Ծառայության անվանումը	Մոտեցում Մեծամորի թանգարան 4.1կմ (3.6+0.5) ավտոճանապարհի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն
Ճանապարհի անվանումը	Մոտեցում Մեծամորի թանգարան ավտոճանապարհ
Հատված	Կմ 0+000 - Կմ2+702; Կմ 0+000 - Կմ1+410
Աշխատանքի տեսակը	Ըստ նախագծի
Ծառայության մատուցման ընդհանուր պահանջներ	• Իրականացնել ամենօրյա տեխնիկական հսկողություն՝ համաձայն քաղաքաշինության նախարարի թիվ 44 առ 28.04.1998թ. «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ» հրամանում բերված դրույթների՝ ապահովելով Ծառայությունը մատուցողի կողմից նշանակված տեխնիկական հսկիչի ամենօրյա ներկայությունը շինարարական օբյեկտում (ընդ որում տեխնիկական հսկիչը պետք է ունենա ճարտարագետ-շինարարի որակավորում և տրանսպորտային ոլորտի շինարարության որակի տեխնիկական հսկողության առնվազն 3 տարվա մասնագիտական փորձառություն): Տվյալ շինարարական տեղամասում նշանակված տեխնիկական հսկիչի անհարգելի բացակայության դեպքում Ծառայություն մատուցողը պայմանագրով սահմանված կարգով կրում է պատասխանատվություն: • Հսկել շինարարական աշխատանքների ընթացքը, համապատասխանությունն ապահովելու նպատակով՝ աշխատանքային նախագծին, կապալի պայմանագրի դրույթներին և գործող շինարարական նորմերին: • Հաստատել և հսկել աշխատանքների իրականացման ծրագիրը: • Ստուգել և հսկել նյութերի որակը և շինարարական աշխատանքների ընթացքը: Արգելել կամ պահանջել փոփոխել այն շինարարական նյութերը, որոնք չեն համապատասխանում պահանջվող որակի պահանջներին: • Գնահատել և հսկել շինարարական աշխատանքների ընթացքը, որպեսզի ապահովվի շինարարական աշխատանքների ավարտը՝ համաձայն պայմանագրով սահմանված ժամանակացույցի: • Ստուգել բոլոր այն լաբորատոր փորձարկումների արդյունքները, ինչպես նաև օգտագործվող նյութերի և կոնստրուկցիաների որակի հավաստագրերը, որոնք անհրաժեշտ են որակի ապահովման համար: • Ստուգել բոլոր փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են համապատասխան վճարումները իրականացնելու համար: • Կատարել որակի և կատարված ծավալի ամենօրյա հսկում: Հաստատել վճարման հավաստագրերը, եթե աշխատանքները կատարվել են անհրաժեշտ որակով և ծավալով: • Կապալառուին պարզաբանել նախագծային փաստաթղթերի հետ կապված հարցերը: Անհրաժեշտության դեպքում առաջարկել աշխատանքային ժամանակացույցի մեջ կատարել փոփոխություններ կամ առաջարկել կատարել լրացուցիչ վճարումներ (երկու դեպքում էլ անհրաժեշտ է Պատվիրատուի համաձայնությունը):

- Իրականացնել հսկողություն աշխատանքային տեղամասերում շինարարական աշխատանքների անվտանգությունը ապահովելու նպատակով: Հրահանգել կապալառուին ապահովել աշխատանքային տեղամասերում անհրաժեշտ նշանների, լուսավորության, անվտանգության այլ միջոցների առկայությունը՝ շինարարության ընթացքում երթևեկության կազմակերպման հաստատված սխեմաների համապատասխան:
- Կատարել անհրաժեշտ օրական գրառումներ, որոնք անհրաժեշտ են պայմանագրի ընթացքի տեխնիկական հսկման համար (ընդգրկելով կատարված աշխատանքների օրական հավաստագրերը և այլ անհրաժեշտ փաստաթղթեր):
- Ստուգել և հաստատել կապալառուի կողմից նախապատրաստված կատարողական գծագրերը:

Նշանակված տեխնիկական հսկիչի տվյալների և հաշվետվությունների ներկայացման պահանջներ

- Կատարողը պարտավոր է պայմանագրով տեխնիկական հսկողության ծառայությունների կատարման պարտավորությունը ստանձնելուց հետո 3 (երեք) օրյա ժամկետում Պատվիրատուին ներկայացնել տեխնիկական հսկողության ծառայության համար նշանակված տվյալ շինարարական տեղամասի տեխնիկական հսկիչի տվյալները (անուն, ազգանուն, ստորագրության նմուշ, հեռախոսի համար):
- Կատարողը պարտավոր է ներկայացնել Պատվիրատուին Ծառայությունների վերաբերյալ ***<u>ընթացիկ և ավարտական հաշվետվություններ</u>***, որոնք հանդիսանում են Ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունները հիմնավորող փաստաթղթեր:

- ***<u>Ընթացիկ հաշվետվությունները</u>*** ներկայացվում են շինարարական աշխատանքների յուրաքանչյուր կատարողական ակտի ժամանակահատվածին համապատասխան՝ շինարարական աշխատանքների յուրաքանչյուր կատարողական ակտը Ծառայություն մատուցողի կողմից ստորագրելուց հետո 2 (երկու) օրյա ժամկետում՝ Ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունների հետ մեկտեղ: Ընթացիկ հաշվետվությունները ընդգրկելու են իրականացված ծառայությունները և կատարված աշխատանքները հավաստող ու հիմնավորող տեխնիկական փաստաթղթերի պատճենները (համառոտ նկարագրություն տվյալ ժամանակահատվածում իրականացված շինարարական աշխատանքների և տեխնիկական հսկողության ծառայությունների վերաբերյալ, տեղեկանք (Ձև 2), լաբորատոր փորձարկումների արդյունքներ, նյութերի, կոնստրուկցիաների որակի համապատասխանության հավաստագրեր, ծածկված (միջանկյալ) աշխատանքների ընդունման ակտեր, ծածկված (միջանկյալ) աշխատանքների լուսանկարներ (տպագրված և էլեկտրոնային կրիչով), սխեմաներ, թույլտվություններ, և այլ անհրաժեշտ փաստաթղթեր:

- ***<u>Ավարտական հաշվետվությունը</u>*** պետք է ընդգրկի հետևյալ փաստաթղթերի պատճենները՝ ավարտական կատարողական գծագրեր, ավարտական կատարողական ակտ, ամփոփ նկարագրական տեղեկանք իրականացված շինարարական աշխատանքների ամբողջ ժամանակահատվածի համար, ավարտված շինարարական օբյեկտի լուսանկարներ (տպագրված և էլեկտրոնային կրիչով)

- ***<u>Ավարտական հաշվետվությունը</u>*** ներկայացվում է շինարարական աշխատանքների ավարտական կատարողական ակտը Ծառայություն մատուցողի կողմից ստորագրելուց հետո երկօրյա ժամկետում:

Նորմատիվային պահանջներ

Տեխնիկական հսկողության ծառայությունները իրականացնել համաձայն՝
- ՀՀ քաղաքաշինության մասին օրենքի,
- Քաղաքաշինության նախարարի թիվ 44 առ 28.04.1998թ. «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ» հրամանի,
- ՀՀ կառավարության թիվ N 526-Ն 04 մայիսի 2017թ. Որոշման:

Ծառայությունների մատուցման ժամկետը

սկիզբը	*ավարտը*
Համապատասխան շինարարական աշխատանքների կատարման սկիզբը	Համապատասխան շինարարական աշխատանքների կատարման ավարտը

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
Ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք. Երևան Կառավարական տուն 3
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02578338
Հ/Հ 900011002632

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական
փորձաքննություն» ՓԲԸ
Ք. Երևան, Կոմիտաս 54բ
«Արդշինբանկ» ՓԲԸ «Նաիրի» մ/ճ
Հ/Հ 2473700277210010
ՀՎՀՀ 01508665

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված թիվ 1.1
« 03 » սեպտեմբեր 2019թ. կնքված
ՏԿԵՆ-ՀՄԱ-ԾՁԲ- 2019/2ՏՀ ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ

Մոտեցում Մեծամորի թանգարան 4.1կմ (3.6+0.5) ավտոճանապարհի հիմնանորոգման աշխատանքների կատարման

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափ. միավ.	Քանակը
1	2	3	4
	Ա/Ճ Մոտեցում Մեծամորի Թանգարան Հատված Կմ 0+000 - Կմ2+702		
	I, Նախապատրաստական աշխատանքներ		
1	10կվ էլեկտրահաղորդման գծի տեղափոխում նոր հաղորդալարի մոնտաժում (3 x 1450 մ)	գծմ	1450
	Գազատարի վերատեղադրում		
1	Գոյություն ունեցող գազատարի ապամոնտաժում և վերատեղադրում	գծմ	220
	Դիտահորերի բարձրացում		
1	Գոյ, ունեցող դիտահորերի բարձրացում միաձույլ բետոնով B 20	հատ	4
	Ցանկապատեր		
1	Գոյ, ունեցող ցանցե ցանկապատի ապամոնտաժում և վերադարձ սեփականատիրոջը	գծմ	30
2	Գոյություն ունեցող ցանցե ցանկապատի ապամոնտաժում վերատեղադրմամբ	գծմ	88
	II, Հողային աշխատանքներ		
1	Ա/բ ծածկի քանդում h=10սմ և բարձում էքս, 1,0մ3շ,տ, ա/ի տեղ, լցակույտ 3,0կմ	տ	1288
2	33r-III կարգի բնահողի մշակում և բարձում էքս,1,0մ3շ,տ, ա/ի վրա, տեղ, լցակույտ 3,0կմ	մ³	2423.8
3	33r-III կարգի բնահողի մշակում ձեռքով, բարձում ա/ի վրա, տեղափոխում լցակույտ 3,0կմ	մ³	230
4	10e-IV կարգի բնահողի մշակում և բարձում էքս, 1,0 մ3 շ, տ, ա/ի վրա, տեղափոխում լիցք 1,0կմ(հարթում,ջրում, խտացում)	մ³	68.4
5	10e-IV կարգի բնահողի մշակում և տեղափոխում 50մ լիցք բուլդոզերով (հարթում,ջրում, խտացում)	մ³	114
6	10e-IV կարգի բնահողի մշակում և բարձում պահուստում էքս, 1,25 մ3 շ, տ, ա/ի վրա, տեղափոխում լիցք 2,0կմ(հարթում,ջրում, խտացում)	մ³	21.5
	III, Կողային առուներ		

1	10e-IV կարգի բնահողի մշակում և բարձում էքս, 0,65մ3 շ,տ, ա/ի վրա տեղափոխում լցակույտ 3,0կմ	մ³	222.5
2	10e-IV կարգի բնահողի մշակում ձեռքով, բարձում ա/ի վրա, տեղափոխում լցակույտ 3,0կմ	մ³	20
3	33r-III կարգի բնահողի մշակում և բարձում էքս, 0,65մ3 շ,տ, ա/ի վրա, տեղափոխում լցակույտ 3,0կմ	մ³	106.6
4	33r-III կարգի բնահողի մշակում ձեռքով, բարձում ա/ի վրա, տեղափոխում լցակույտ 3,0կմ	մ³	10
	IV, Կողնակ		
1	Կողնակների իրականացում ավազակոպճային նյութով h=7սմ պլաստիկության ցուցանիշը 2-5% (նորոգվող հատվածներում)	մ²	4590
2	Կողնակների իրականացում ավազակոպճային նյութով h=5սմ պլաստիկության ցուցանիշը 2-5% (վերակառուցվող հատվածներում)	մ²	1572
3	Պահուստից 10e-IV կարգի բնահողի մշակում և բարձում էքս, 1,25մ3 շ, տ, ա/ի վրա, տեղափոխում 2,0կմ հեռավորությամբ կողնակի լիցք h=20սմ (հարթում,ջրում, խտացում)	մ³	314.4
	V, Երթևեկելի մաս		
1	Խճավազային հիմք h=15սմ (C-5), 100մ2-ի համար՝ խիճ (40-70)-10% - 1,95մ3 խիճ (20-40)- 35% -6,825մ3 խիճ (10-20)-20% -3,9մ3 խիճ (5-10)-10% -1,95մ3 խիճ (0-5)-25% - 4,875մ3 (ավազ) ջուր-1,1մ3	մ²	8941
2	Խճավազային հիմքի (C 5) մակերեսի մշակում բիտումային էմուլսիայով 1մ2 - 0,6 լ	տ	5.257
3	Ենթահիմք (ավազակոպիճ) h=10սմ	մ²	10543
4	Խոշորահատիկ ա/բ h=6սմ	մ²	8815
5	Մանրահատիկ ա/բ h=4սմ տիպ „Բ"	մ²	17815
6	Փոսային նորոգում խճային հիմքով h=8-16սմ բիտումի տարածումով 4,12տ/1000մ2 խոշորահատիկ ա/բ h=6սմ	մ²	220
7	Փոսային նորոգում h=3-5սմ	մ²	220
8	Ա/բ ծածկի մակերեսի մշակում բիտումով	տ	1.764
9	Հարթեցնող շերտ h=3սմ	տ	*634.54*
	VI, Իջատեղեր		
1	10e-IV կարգի բնահողի քանդում էքս, 0,65մ3 շ,տ, բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ հեռ, 3,0կմ	մ³	26
2	33r-III կարգի բնահողի քանդում էքս, 0,65մ3 շ,տ, բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ հեռ, 3,0կմ	մ³	78

3	10e-IV կարգի բնահողի քանդում ձեռքով, բարձում ա/ի վրա տեղափոխում լցակույտ հեռ, 3,0կմ	մ³	3
4	33r-IIIկարգի բնահողի քանդում, բարձում ձեռքով ա/ի վրա, տեղափոխում լցակույտ հեռ, 3,0կմ	մ³	7
5	Մանրահատիկ Ա/Բ h=4սմ	մ²	1616.14
6	Խիճավազային հիմք h=12սմ (C-5),100մ2-ի համար՝ խիճ (40-70)-1,56մ3 խիճ (20-40)-5,46մ3 խիճ (10-20)-3,12մ3 խիճ (5-10)-1,56մ3 խիճ (0-5)-3,9մ3 (ավազ) ջուր-1,1մ3	մ²	1538.89
7	Խճավազային հիմքի (C 5) մակերեսի մշակում բիտումային էմուլսիայով 1մ2 - 0,6 լ	տ	0.905
8	Ø0,426մ մետ. խողովակի տեղադրում (6մմ)	գծմ	210.02
9	Ավազակոպճային շերտ h=10սմ (խող, տակ)	մ³	10.766
10	Ø0,426մ մետ. խողովակի ջրամեկուսացում	գծմ	202.22
11	Վաքի և խողովակի միացման միաձույլ բետոն B-20	մ³	2.34
12	Ø0,530մ խողովակի տեղադրում (6=7մմ)	գծմ	5.0
13	Ø0,530մ խողովակի ջրամեկուսացում	գծմ	4.4
14	Ø0,530մ խողովակի գլխամասերի կառուցում միաձույլ բետոնով B-20	մ³	0.8
15	Ø0,530մ խողովակի գլխամասերի ջրամեկուսացում	մ²	2.6
16	Հետիոտային անցումներում մետ. խողովակի Ø0,426մ տեղադրում (6մմ)	գծմ	30.0
17	Ավազակոպճային շերտ h=10սմ (խող, տակ)	մ³	0.85
18	Ø0,426մ մետ. խողովակի ջրամեկուսացում	գծմ	28.20
19	Միացման միաձույլ բետոն B-20	մ³	0.55
20	Կմ1+320-ում իջատեղի (ձախից) գոյություն ունեցող կամրջի, մուտքի ելքի և կամրջատակի մաքրում ձեռքով բարձում ա/ի -ի վրա տեղ, լցակույտ 3,0կմ հեռ, վրա	մ³	3
21	Կամրջի հիմքի և պատերի ամրացումը միաձույլ բետոնով B -20	մ³	2.4
22	Կամրջի եզրապատերի կառուցում միաձույլ բետոնով B-20 (2,6x0,4x0,3)x2	գծմ	5.2
23	Կմ2+257 իջատեղ (ձախից)Ø0,426մ մետ. խողովակի ելքում միաձույլ բետոնե ջրհորի կառուցում B-20	հատ	1
24	Կմ2+678, կմ2+679 իջատեղ (ձախից և աջից) Ø 0,426մ մետ. խողովակների ելքերում միաձույլ բետոնե ջրհորների կառուցում B-20	հատ	2

25	Ջրհորների պատերի ջրամեկուսացում	մ²	23.1
26	Մետաղական ցանցի պատրաստում և տեղադրում > L 63x5մմ տեղադրում > L 50x5մմ տեղադրում > A500 C Ø 14մմ տեղադրում l=0,86մ (96հատ)	տ	0.194
27	Գոյություն ունեցող կերամ, խող,ապամոնտաժում Ø0,45մ և վերադարձ սեփականատիրոջը	գծմ	9
28	Գոյություն ունեցող կերամ, խող,ապամոնտաժում Ø0,4մ և վերադարձ սեփականատիրոջը	գծմ	19
29	Գոյություն ունեցող մետ, խող,ապամոնտաժում Ø0,325մ և վերադարձ սեփականատիրոջը	գծմ	11.5
30	Գոյություն ունեցող մետ, խող,ապամոնտաժում Ø0,426մ և վերադարձ սեփականատիրոջը	գծմ	32
31	Գոյություն ունեցող մետ, խող,ապամոնտաժում Ø0,53մ և վերադարձ սեփականատիրոջը	գծմ	11
32	Ե/բ սալ ապամոնտաժում և վերադարձ սեփականատիրոջը	մ³	1.68
	VII, Մայթեր		
1	Մանրահատիկ ա/բ h=3սմ	մ²	1462.88
2	Ավազակոպճային շերտ h=12սմ	մ²	1462.88
3	Բազալտե15x30սմ եզրաքարի տեղադրում միաձույլ բետոնե հիմք B-15, 1գծմ-0,035մ3,ավազկոպճային շերտ h=5սմ ,1գծմ-0,0125մ3	գծմ	103
4	Միաձույլ բետոնե եզրաշար 10x20սմ B-15,ավազակոպճային շերտ h=5սմ,1գծմ-0,01մ3	գծմ	786
	VIII, Ե/բ ЛР վաքեր		
1	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ³	24.12
2	ЛР-4 -ի տեղադրում B-25	գծմ	804
3	Ջրամեկուսացում	մ²	908.52
4	Անվտանգության բետոնե 15x30սմ եզրաքարի տեղադրում 1:1, միաձույլ բետոնե հիմք B-15, 1գծմ-15մ3, ավազկոպճային շերտ h=5սմ ,1գծմ-0,0125մ3	գծմ	402
5	Գոյություն ունեցող ЛР-ի ապամոնտաժում և վերադարձ սեփականատիրոջ	գծմ	846
6	Գոյություն ունեցող մետ, կիսախողովակի 426մմ /2 ապամոնտաժում և վերադարձ սեփականատիրոջ	գծմ	12
	X,Գծանշում		
	հոծ գիծ 1,1 (0,1)	գծմ	515
	ընդհատվող գիծ 1,5 1:3 (0,1)	գծմ	1485
	ընդհատվող գիծ 1,6 3:1 (0,1)	գծմ	730
	գծանշում 1,14,1	մ²	92.8
	գծանշում 1,13	մ²	3.9
	գծանշում 1,20	մ²	1.2

	XI, Ճանապարհային նշաններ		
	- նախազգուշացնող	հատ	7
	- առավելության	հատ	25
	- արգելող	հատ	13
	- հատուկ թելադրանքի	հատ	32
	- հատուկ թելադրանքի (անհատական նախագծման)	մ²	2.46
	- տեղեկատվության	հատ	2
	տեղեկատվության (անհատական նախագծման)	մ²	23.19
	- լրացուցիչ տեղեկատվության	հատ	6
	միաձույլ բետոն B-15	մ³	8.1
	մետ. կանգնակØ 57մմ	գծմ	173
	մետ. կանգնակØ 76մմ	գծմ	69
2	Ճան. նշանների ապամոնտաժում և վերադարձ սեփականատիրոջը	հատ	4
	XII, Արգելափակոցներ		
1	Պոլիմերային ազդանշանային սյունների տեղադրում(C1)	հատ	137
	XIII, Արհեստական կառուցվածքներ		
1	Մետաղական ժարտ= 325 մմ խողովակի տեղադրում 1գծմ=39,46 կգ, պատի հաստ, 5մմ	գծմ	18.4
2	Մետաղական ժարտ= 530 մմ խողովակների տեղադրում, 1գծմ=90,29կգ, պատի հաստ, 7մմ	գծմ	34.8
3	Հավաքովի ե/բ խողովակի d=1,5մ նորոգում	հատ	1
4	Հավաքովի ե/բ ուղղ, խողովակի բացվ,2x2մ նորոգում	հատ	1
5	Կմ 1+824,54 նոր կամրջի կառուցում	հատ	1
6	Կմ 2+100,61-ում կամրջային անցման վերանորոգում	հատ	1
	Հատված Կմ 0+000 - Կմ2+702 ընդհանուրը		
	Ա/Ճ Մոտեցում Մեծամորի Թանգարան Հատված Կմ 0+000 - Կմ1+410		
	I, Նախապատրաստական աշխատանքներ		
3	10կվ էլեկտրահաղորդման գծի տեղափոխում նոր հաղորդալարի մոնտաժում (3 x 450 մ)	գծմ	450
	II, Հողային աշխատանքներ		
1	10e-IV կարգի բնահողի մշակում էքսկ, 1,0մ3 շ,տ, կողքի կուտակումով (կողնակների լիցքի համար)	մ³	28.4
2	Ա/բ ծածկի քանդում h=10սմ և բարձում էքս, 1,0մ3շ,տ, ա/ի տեղ, լցակույտ 3,0կմ	տ	1586
3	33r-III կարգի բնահողի մշակում և բարձում էքս,1,0մ3շ,տ, ա/ի վրա, տեղ, լցակույտ 3,0կմ	մ³	2171.3
4	33r-III կարգի բնահողի մշակում ձեռքով, բարձում ա/ի վրա, տեղափոխում լցակույտ 3,0կմ	մ³	210
5	10e-IV կարգի բնահողի մշակում և բարձում էքս, 1,0 մ3 շ, տ, ա/ի վրա, տեղափոխում լիցք 1,0կմ(հարթում,ջրում, խտացում)	մ³	239

6	10e-IV կարգի բնահողի մշակում և տեղափոխում 50մ լիցք բուլդոզերով (հարթում,ջրում, խտացում)	մ³	40
	IV, Կողնակ		
1	Կողնակների իրականացում ավազակոպճային նյութով h=5սմ պլաստիկության ցուցանիշը 2-5% (վերակառուցվող հատվածներում)	մ²	1719.6
2	Կողնակների իրականացում 10e-IV կարգի բնահողից h=20սմ(10e-IV կարգի հանույթի մշակված բնահողից բարձում էքս, 1,0 մ3 շ, տ, ա/ի վրա, տեղափոխում կողնակների լիցք 1,0կմ)(հարթում,ջրում, խտացում)	մ³	28.4
3	Պահուստից 10e-IV կարգի բնահողի մշակում և բարձում էքս, 1,25մ3 շ, տ, ա/ի վրա, տեղափոխում 2,0կմ հեռավորությամբ կողնակի լիցք h=20սմ (հարթում,ջրում, խտացում)	մ³	315.5
	V, Երթևեկելի մաս		
1	Խճավազային հիմք h=15սմ (C-5), 100մ2-ի համար՝ խիճ (40-70)-10% - 1,95մ3 խիճ (20-40)- 35% -6,825մ3 խիճ (10-20)-20% -3,9մ3 խիճ (5-10)-10% -1,95մ3 խիճ (0-5)-25% - 4,875մ3 (ավազ) ջուր-1,1մ3	մ²	8065
2	Խճավազային հիմքի (C 5) մակերեսի մշակում բիտումային էմուլսիայով 1մ2 - 0,6 լ	տ	4.742
2	Ենթահիմք (ավազակոպիճ) h=10սմ	մ²	10201
3	Խոշորահատիկ ա/բ h=6սմ	մ²	7934
4	Մանրահատիկ ա/բ h=4սմ տիպ „բ"	մ²	7934
	VI, Իջատեղեր		
1	10e-IV կարգի բնահողի քանդում էքս, 0,65մ3 շ,տ, բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ հեռ, 3,0կմ	մ³	55
2	33r-III կարգի բնահողի քանդում էքս, 0,65մ3 շ,տ, բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ հեռ, 3,0կմ	մ³	481
3	10e-IV կարգի բնահողի քանդում ձեռքով, բարձում ա/ի վրա տեղափոխում լցակույտ հեռ, 3,0կմ	մ³	5
4	33r-IIIկարգի բնահողի քանդում, բարձում ձեռքով ա/ի վրա, տեղափոխում լցակույտ հեռ, 3,0կմ	մ³	45.0
5	10e-IV կարգի բնահողի քանդում էքս, 0,65մ3 շ,տ, բարձում ա/ի և տեղափոխում հանգստի հարթակի լիցք 1,0կմ	մ³	10.00
6	Մանրահատիկ Ա/Բ h=4սմ	մ²	2232.86
7	խոշորահատիկ ա/բ h=6սմ (ավտոկայանատեղերում)	մ²	1534.40

8	Խիճավազային հիմք h=12սմ (C-5),100մ2-ի համար՝ խիճ (40-70)-1,56մ3 խիճ (20-40)-5,46մ3 խիճ (10-20)-3,12մ3 խիճ (5-10)-1,56մ3 խիճ (0-5)-3,9մ3 (ավազ) ջուր-1,1մ3	$մ^2$	652.28
9	Խճավազային հիմքի (C 5) մակերեսի մշակում բիտումային էմուլսիայով 1մ2 - 0,6 լ	տ	0.384
10	Խիճավազային հիմք h=15սմ (C-5),100մ2-ի համար՝ խիճ (40-70)-1,95մ3 խիճ (20-40)-6,825մ3 խիճ (10-20)-3,9մ3 խիճ (5-10)-1,95մ3 խիճ (0-5)-4,875մ3 (ավազ) ջուր-1,1մ3 (ավտոկայանատեղում)	$մ^2$	1534.40
11	Խճավազային հիմքի (C 5) մակերեսի մշակում բիտումային էմուլսիայով 1մ2 - 0,6 լ	տ	0.902
12	Ենթահիմք (ավազակոպիճ) h=10սմ (ավտոկայանատեղում)	$մ^2$	1534.40
13	Կմ 0+869-ում մուտք (աջից)գոյ, ունեցող խողովակի գլխամասերի կառուցում միաձույլ բետոնով B-20	$մ^3$	2.6
14	Կմ0+869-ում գոյ, ունեցող խողովակի մաքրում մուտքում, ելքում և մեջը ձեռքով բարձում ա/ի -ի վրա տեղ, լցակույտ 3,0կմ	$մ^3$	3
15	Կմ 1+103 -ում մուտք (աջից) գոյ, ունեցող խողովակի գլխամասերի կառուցում միաձույլ բետոնով B-20	$մ^3$	2.6
16	Կմ1+103-ում գոյ, ունեցող խողովակի մաքրում մուտքում, ելքում և մեջը ձեռքով բարձում ա/ի -ի վրա տեղ, լցակույտ 3,0կմ	$մ^3$	3
	VII, Մայթեր		
1	Մանրահատիկ ա/բ h=3սմ	$մ^2$	905.81
2	Ավազակոպճային շերտ h=12սմ	$մ^2$	905.81
3	Բազալտե15x30սմ եզրաքարի տեղադրում միաձույլ բետոնե հիմք B-15, 1գծմ-0,035մ3,ավազկոպճային շերտ h=5սմ ,1գծմ-0,0125մ3	գծմ	1438
4	Միաձույլ բետոնե եզրաշար 10x20սմ B-15,ավազակոպճային շերտ h=5սմ,1գծմ-0,01մ3	գծմ	1111
5	Միաձույլ բետոնե եզրաշար 10x20սմ B-15 ավտոկայանատեղի շուրջը,ավազակոպճային շերտ h=5սմ,1գծմ-0,01մ3	գծմ	145.4
6	Ավտոկայանատեղի եզրամասում սնահոդի լիցք h=10սմ (սնահոդի մշակում և բարձում էքս, 1,0մ3շ,տ, ա/ի վրա տեղ, 2,0կմ) (խոտի ցանում)	$մ^2$	232.5

7	Հանգստի հարթակում լիցքի իրականացում h=5սմ 10eIV (իջատեղի բնահողից), (ջրի ցանումով և խտացմամբ պնեմոտոտփանով)	մ³	10
8	Ծառաբների շուրջը բազալտե եզրաքարերի 10x20սմ տեղադրում միաձույլ բետոնե հիմքի վրա B-15 ,1գծմ - 0,025մ3,ավազակոպճային շերտ h=5սմ ,1գծմ-0,01մ3	գծմ	30
9	Հանգստի հարթակում բազալտե եզրաքարերի 10x20սմ տեղադրում միաձույլ բետոնե հիմքի վրա B-15 ,1գծմ - 0,025մ3,ավազակոպճային շերտ h=5սմ ,1գծմ-0,01մ3	գծմ	68
10	Ավտոկայանատեղի շուրջը բազալտե եզրաքարերի 15x30սմ տեղադրում միաձույլ բետոնե հիմքի վրա B-15 ,1գծմ - 0,035մ3,ավազակոպճային շերտ h=5սմ , 1գծմ-0,0125մ3	գծմ	116
11	Գոյ, ունեցող մայթի բազալտե եզրաքարերի քանդում և վերադարձ սեփականատիրոջը	գծմ	170
12	Ծառաբներում սնահողի լիցք h=10սմ (սնահողի մշակում և բարձում էքս,1մ3շ,տ, ա/ի տեղափոխում 2,0կմ,)	մ²	12
13	Ավազացեմենտային խարնուրդ h=7սմ (հանգստի հարթակում 30% ցեմենտ 70% ավազ)	մ²	196
14	Բազալտե սալերի տեղադրում h=3սմ (հանգսի հարթակում)	մ²	196
	IX,Բազալտե քարերով վերին հենապատի նորոգում		
1	Գոյություն ունեցող բազալտե քարերով վերին հենապատի թափված քարերի վերականգնումը նույնատիպ բազալտե քարերով	մ²	3
2	Միաձույլ բետոնե թասակի կառուցում h=5սմ B-20	գծմ	95
3	Գոյություն ունեցող ցանցե ցանկապատի ներկում (յուղաներկ)	մ²	162
	X,Գծանշում		
	հոծ գիծ 1,1 (0,1)	գծմ	653
	ընդհատվող գիծ 1,5 1:3 (0,1)	գծմ	580
	ընդհատվող գիծ 1,6 3:1 (0,1)	գծմ	400
	գծանշում 1,13	մ²	1.5
	գծանշում 1,20	մ²	1.2
	XI, Ճանապարհային նշաններ		
	- նախազգուշացնող	հատ	8
	- առավելության	հատ	12
	- արգելող	հատ	14
	- տեղեկատվության	հատ	4
	տեղեկատվության (անհատական նախագծման)	մ²	7.71
	- լրացուցիչ տեղեկատվության	հատ	11
	միաձույլ բետոն B-15	մ³	4.73
	մետ. կանգնակØ 57մմ	գծմ	115
	մետ. կանգնակØ 76մմ	գծմ	34

XII, Արգելափակոցներ			
1	Պոլիմերային ազդանշանային սյունների տեղադրում(C1)	հատ	106
XIII, Արհեստական կառուցվածքներ			
1	Մետաղական ժարտ=1520մմ խողովակի տեղադրում, 1գծմ= 537 կգ, պատի հաստ,15մմ	գծմ	14
2	Մետաղական ժարտ=820մմ խողովակի տեղադրում 1գծմ=140,35կգ, պատի հաստ, 7մմ	գծմ	10.9
3	Մետաղական ժարտ= 530 մմ խողովակի տեղադրում1գծմ=90,29կգ, պատի հաստ, 7մմ	գծմ	11.8
4	Մետաղական խողովակի d=1020մմ նորոգում	հատ	1
5	Կմ 0+830,87-ում կամրջային անցման վերանորոգում	հատ	1

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք. Երևան Կառավարական տուն 3
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02578338
Հ/Հ 900011002632

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական
փորձաքննություն» ՓԲԸ
Ք. Երևան, Կոմիտաս 54բ
«Արդշինբանկ» ՓԲԸ «Նաիրի» մ/ճ
Հ/Հ 2473700277210010
ՀՎՀՀ 01508665

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 3
« » _____ 2019թ. կնքված
ՏԿԵՆ-ՀՄԱ-ԾՁԲ- 2019/2ՏՀ ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » _____ 2019թ. կնքված
ՏԿԵՆ-ՀՄԱ-ԾՁԲ- 2019/2ՏՀ ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ թիվ 1
03.09.2019թ. կնքված N ՏԿԵՆ-ՀՄԱ-ԾՁԲ-2019/2ՏՀ պետական գնման պայմանագրի

ք. Երևան **<< 15 >> հոկտեմբերի 2019թ.**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարին փոխարինող Հ. Բատիկյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն>> ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Գ. Արշակյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, ՀՀ կառավարության 2019թ. սեպտեմբերի 12-ի թիվ 1184-Ն և 1209-Ա որոշումների և հիմք ընդունելով Կողմերի միջև 03.09.2019թ. կնքված N ՏԿԵՆ-ՀՄԱ-ԾՁԲ-2019/2ՏՀ պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 կետը փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Կողմերը որոշեցին.

1.1 Հաստատել Համաձայնագրի 2019թ. Վճարման Ժամանակացույցը համաձայն հավելված 1-ի:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կնքվում է հայերեն լեզվով երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,	ք. Երևան, Կոմիտաս 54բ
ՀՀ կենտրոնական գանձապետարան	«Արդշինբանկ» ՓԲԸ «Նաիրի» մ/ճ
ՀՎՀՀ 02578338	ՀՎՀՀ 01508665
ՀՀ 900011002632	ՀՀ 2473700277210010
/ստորագրություն/	/ստորագրություն/

Հաստատված է
N ՏԿԵՆ-ՀՄԱ-ԾՁԲ-2019/2ՏՀ գնման պայմանագրի
«15» հոկտեմբերի 2019թ. կնքված
Թիվ 1 Համաձայնագրով
Հավելված թիվ 1

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Մոտեցում Մեծամորի թանգարան 4.1կմ (3.6+0.5) ավտոճանապարհի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների

(ՀՀ դրամ)

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Գնման ենթակա աշխատանքների անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը տարի
1	71351540/60	Մոտեցում Մեծամորի թանգարան 4.1կմ (3.6+0.5) ավտոճանապարհի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություններ										2496000	2496000	2496000	**2496000**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02578338
ՀՀ 900011002632

/ստորագրություն/

ԿԱՏԱՐՈՂ
«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական
փորձաքննություն» ՓԲԸ
ք. Երևան, Կոմիտաս 54բ
«Արդշինբանկ» ՓԲԸ «Նաիրի» մ/ճ
ՀՎՀՀ 01508665
ՀՀ 2473700277210010

/ստորագրություն/